



Հաստատված է՝

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական  
կենտրոնի խորհրդի 16.04.2013 թ. № 02-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՍՄԱՎՈՐՆԵՐԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԳՐԱՎՈՐ ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
(AMICUS CURIAE)**

№ 02-13-Ա

ք.Երևան

16.04.2013 թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը, մասնակցությամբ համակարգող Արա Չոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ Արտակ Զեյնալյանի<sup>1</sup>, նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանի, Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված «Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

տալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

<sup>1</sup> Արտակ Զեյնալյանը ներկայացրել է հատուկ կարծիք

**Հարցի կարևորությունը.**

Սույն սահմանադրական գործով դիմողներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի (այսուհետ՝ Ազգային ժողով) պատգամավորները, որոնք բարձրացրել են «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 44-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության խնդիր: Քննարկվող նորմը վերաբերում է Ազգային ժողովում փոքրամասնություն կազմող պատգամավորների՝ արտահերթ նիստ գումարելու իրավունքի իրացման հարցին:

**Միջամտությունների (մեկնաբանությունների շրջանակը).**

Սույն միջամտության շրջանակում Կենտրոնն անդրադարձ է կատարելու այն իրավական հարցադրմանը, թե որքանո՞վ է արտահերթ նստաշրջան գումարելու պատգամավորների նախաձեռնության վերաբերյալ նախատեսված կարգավորումը համընկնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված կարգավորման հետ:

**Վիճարկվող նորմի մեկնաբանությունը.**

1. Սույն սահմանադրական գործով վիճարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավական նորմը (այսուհետ՝ Վիճարկվող նորմ), համաձայն որի՝  
***«4. Նիստն իրավագոր է, եթե սահմանված կարգով գրանցվել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին (քվորումն ապահովված է):»***
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Օրենքի համակարգային վերլուծությունից բխում է, որ Ազգային ժողովը, որպես բարձրագույն օրենսդիր, ինչպես նաև ներկայացուցչական մարմին իր գործունեությունն իրականացնում է նստաշրջանների և նիստերի միջոցով:
3. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ *Ազգային ժողովը գործում է Սահմանադրությանը և սույն կանոնակարգին համապատասխան՝ նստաշրջանների, նիստերի, ինչպես նաև իր մարմինների, խմբակցությունների և պատգամավորական խմբերի*

*աշխատանքի միջոցով:*

4. Օրենսդիր մարմնի՝ նիստերի ու նստաշրջանների միջոցով գործելու, ինչպես նաև այդ նիստերի ու նստաշրջանների անցկացման հստակ իրավական կարգավորում նախատեսված լինելու հանգամանքը հանդես են գալիս որպես օրենսդիր մարմնի կանոնավոր գործունեության ապահովման երաշխիք:
5. ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է Ազգային ժողովի հերթական և արտահերթ նիստեր գումարելու հնարավորություն: Ընդ որում՝ Օրենքով տարբերակված են **«արտահերթ նիստ»** և **«արտահերթ նստաշրջան»** հասկացությունները:
6. **«Արտահերթ նստաշրջանն»** այն ժամանակահատվածն է, որն ընկած է հերթական նստաշրջանների միջակայքում և գումարվում է ըստ անհրաժեշտության՝ այն նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետներում:
7. Իսկ **«արտահերթ»** է համարվում այն նիստը, որը գումարվում է հերթական նստաշրջանի ընթացքում, սակայն քառօրյա նիստերի օրը արտահերթ նիստ կարող է գումարվել ժամը 18.30-ից մինչև 24.00-ն՝ ըստ անհրաժեշտության՝ այն նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետներում:
8. ՀՀ Սահմանադրության և Օրենքի համաձայն արտահերթ նիստ կամ արտահերթ նստաշրջան գումարելու նախաձեռնության իրավունքի սուբյեկտ են հանդիսանում Հանրապետության Նախագահը, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը (այսինքն՝ 44 պատգամավոր) կամ Կառավարությունը: Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարում է Ազգային ժողովի նախագահը<sup>2</sup>:

---

<sup>2</sup> Ընդ որում՝ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարելու իրավունքը Ազգային ժողովի նախագահին է վերապահվել 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում: Մինչ այդ, Սահմանադրության 1995 թվականի խմբագրությամբ 70-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարում էր Հանրապետության Նախագահը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ կառավարության նախաձեռնությամբ:

9. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են տարեկան երկու անգամ՝ սեպտեմբերի երկրորդ երկուշաբթի օրից մինչև դեկտեմբերի երկրորդ հինգշաբթին և փետրվարի առաջին երկուշաբթի օրից մինչև հունիսի երկրորդ հինգշաբթին:*
10. ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածի համաձայն՝ *Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարում է Ազգային ժողովի նախագահը՝ Հանրապետության Նախագահի, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ կառավարության նախաձեռնությամբ: Արտահերթ նստաշրջանը կամ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:*
11. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարում է Ազգային ժողովի նախագահը՝ Հանրապետության Նախագահի, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ Կառավարության նախաձեռնությամբ: Արտահերթ նստաշրջանն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:*
12. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններում, վերլուծելով արտահերթ նստաշրջան կամ արտահերթ նիստ գումարելու ընթացակարգը, առանձնացվում են արտահերթ նստաշրջան կամ արտահերթ նիստ գումարելու նախաձեռնության իրավունքի իրականացման հետևյալ փուլերը. Նախ՝ **նախաձեռնման փուլում** Հայաստանի Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագիր, իսկ ՀՀ կառավարությունն ընդունում է որոշում՝ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարելու նախաձեռնության վերաբերյալ՝

---

Իսկ արտահերթ նիստ գումարելու իրավունքը, վերապահված էր Ազգային ժողովի նախագահին, ով արտահերթ նիստը գումարում էր կառավարության կամ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում ազգային ժողովի արտահերթ նիստը, և նստաշրջանը գումարելու իրավունքը վերապահվեց ազգային ժողովի նախագահին, իսկ արտահերթ նիստ կամ նստաշրջան գումարելու նախաձեռնության սուբյեկտ դարձավ նաև Հանրապետության Նախագահը:

սահմանելով արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգը և անցկացման ժամկետը: Պատգամավորների կողմից Ազգային ժողովի աշխատակազմից ստացված և սահմանված կարգով՝ առնվազն 44 պատգամավորների ստորագրություններով, նախապատրաստվում է արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը, որում նշվում են արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգը և անցկացման ժամկետը:

Այնուհետև, **նախաձեռնության իրականացման փուլում** Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգն ու անցկացման ժամկետը սահմանող համապատասխան իրավական ակտը և օրակարգային հարցերի նախագծերը, Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ ՀՀ կառավարության կողմից ուղարկվում են Ազգային ժողովի նախագահին:

Ինչ վերաբերում է Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությանը, ապա վերջիններիս կողմից Ազգային ժողովի նախագահին են հանձնվում ստացման պահից 24 ժամվա ընթացքում անհրաժեշտ քանակի ստորագրություններով ձևաթուղթը և օրակարգային հարցերի նախագծերը:

**Նախաձեռնության իրականացման եզրափակիչ փուլում**, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13.<sup>1</sup>-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Ազգային ժողովի նախագահն ընդունում է որոշում Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարելու վերաբերյալ՝ նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:<sup>3</sup>

13. Պատգամավորներին նման սահմանադրական իրավունքով օժտելն, առաջին հերթին, հնարավորություն է տալիս ազգային ժողովում փոքրամասնություն կազմող պատգամավորներին արտահերթ նիստ կամ նստաշրջան գումարելու նախաձեռնությամբ հանդես գալ, ինչպես նաև նիստն անցկացնել իրենց սահմանած օրակարգով և ժամկետում:

14. Ազգային ժողովի նիստում պատգամավորների գրանցման կարգը սահմանող Վիճարկվող նորմն ամրագրում է. **«Նիստն իրավագոր է, եթե սահմանված կարգով գրանցվել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին (քվորումն ապահովված է):»** (Օրենքի 44-րդ

<sup>3</sup> Տես՝ *Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ*, ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածի մեկնաբանություն, էջ 717:

հողվածի 4-րդ մաս): Նույն հողվածի 5-րդ մասը սահմանում է նիստն իրավագոր չլինելու իրավական հետևանքները: Մասնավորապես՝  
*«5. Եթե նիստն իրավագոր չէ, ապա գրանցումը շարունակվում է մինչև քվորում ապահովելը, բայց ոչ ավելի, քան 3 ժամ: Նշված ժամկետում քվորումի՝*

- ա) ապահովման դեպքում նիստը վարողը պատգամավորներին տեղեկացնում է նիստն սկսվելու մասին.*
- բ) չապահովման դեպքում տվյալ օրվա նիստերը համարվում են չկայացած:»:*

15. Վիճարկվող իրավական նորմը Ազգային ժողովի նիստի (ինչպես հերթական, այնպես էլ՝ արտահերթ) իրավագորության հարցը կապում է նիստում քվորումն ապահովված լինելու հանգամանքի հետ: Իսկ նիստում քվորումն ապահովված է լինում այն դեպքում, երբ նիստին ներկա է (գրանցվել է) **պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին**, այսինքն՝ առնվազն 66 (վաթսունվեց) պատգամավոր:

16. Սույն գործով դիմողներ հանդիսացող Ազգային ժողովի պատգամավորները գտնում են, որ Վիճարկվող իրավական նորմով նախատեսված կարգավորումը հակասության մեջ է գտնվում ՀՀ Սահմանադրության 70-րդ և 71-րդ հոդվածների հետ, քանի որ այդ կարգավորումն ի չիք է դարձնում ՀՀ Սահմանադրությամբ ԱԺ փոքրամասնությանը արտահերթ նստաշրջան, նիստ հրավիրելու իրացման սահմանադրական լիազորությունը:

17. Այստեղ Կենտրոնն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածը վերաբերում է ոչ թե ազգային ժողովի արտահերթ նիստում որոշում ընդունելու հարցին, այլ՝ արտահերթ նիստ կամ նստաշրջան հրավիրելու նախաձեռնության իրավունքի իրացմանը: Այլ կերպ ասած՝ ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածն ամրագրում է Ազգային ժողովի նախագահի պարտականությունը, որն ուղղված է Հանրապետության Նախագահի, կառավարության կամ պատգամավորների ընդհանուր թվի մեկ երրորդի (առնվազն 44 պատգամավորների) նախաձեռնությամբ Ազգային ժողովի արտահերթ նիստ հրավիրելուն:

18. Դիմողները գտել են, որ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ ազգային ժողովի արտահերթ

նստաշրջան կամ նիստ գումարելիս, նիստերը իրավագոր պետք է համարվեն ազգային ժողովի պատգամավորների նույն՝ մեկ երրորդի շեմն ապահովված լինելու դեպքում:

19. Այս կապակցությամբ Կենտրոնն անհրաժեշտ է համարում շեշտադրել այն հանգամանքը, որ ժամանակակից պետություններում բարձրագույն ներկայացուցչական մարմիններում, որոնք իրականացնում են օրենսդիր գործառույթ, ինչպես նաև կոլեգիալության սկզբունքով գործող մնացած բոլոր մարմիններում որոշումների ընդունումն իրականացվում է **ձայների մեծամասնության սկզբունքով**, ելնելով այն գաղափարից, որ ներկայացուցչական մարմնում մեծամասնությունն առավել «ճիշտ է» արտահայտում ժողովրդի կամքը:
20. Այդ մասին է վկայում նաև ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածով նախատեսված նորմը, համաձայն որի՝ *օրենքները և Ազգային ժողովի որոշումները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:*
21. ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածի մեկնաբանության հետ կապված նշվում է. *«Կոլեգիալ ներկայացուցչական այնպիսի մարմնի, ինչպիսին է Ազգային ժողովը, առանձնահատկությունը քվեարկության միջոցով որոշում ընդունելն է: Քվեարկությունը համարվում է կոլեգիալ որոշումների ընդունման առավել ժողովրդավարական եղանակ, քանի որ քվեարկության արդյունքում բացահայտվում է քննարկվող հարցի վերաբերյալ մեծամասնության դիրքորոշումը, իսկ ժողովրդավարության պահանջներից է բխում այն, որ մեծամասնության կարծիքը գերակա է փոքրամասնության կարծիքի նկատմամբ եւ պարտադիր է բոլոր քաղաքացիների համար:»<sup>4</sup>*
22. Ընդհանուր կանոնի համաձայն՝ ազգային ժողովի որոշումներն ընդունվում են **պարզ մեծամասնության սկզբունքով** քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե

<sup>4</sup> Տե՛ս՝ *Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ*, ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածի մեկնաբանություն, էջ 720:

Սահմանադրությամբ որոշումների ընդունման այլ կարգ նախատեսված չէ:

23. ՀՀ Սահմանադրության նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ազգային ժողովի որոշումների ընդունման վերոնշյալ ընդհանուր կանոնից բացառությունները, այսինքն՝ այն դեպքերը, երբ համապատասխան որոշումն ընդունելու համար պահանջվում է **որակյալ մեծամասնություն**, նախատեսվում են հենց Սահմանադրությամբ: Մասնավորապես՝ Ազգային ժողովը Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշումը սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կայացնում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների **առնվազն երկու երրորդով** (հոդված 57), պատգամավորների ընդհանուր թվի ձայների **առնվազն երկու երրորդով** որոշում է ընդունում Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին (հոդված 59), մարդու իրավունքների պաշտպանին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների **առնվազն երեք հինգերորդով** (հոդված 83.1):

24. Այստեղ տեղին է քննարկել հետևյալ օրինակը. ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածով արտահերթ նիստ կամ նստաշրջան գումարելու նախաձեռնությամբ է օժտված նաև Հանրապետության Նախագահը կամ Կառավարությունը: Գործնականում կարող է լինել այն իրավիճակը, երբ արտահերթ նիստ գումարվի Հանրապետության Նախագահի կամ Կառավարության նախաձեռնությամբ՝ վերջինիս կողմից սահմանված օրակարգով, և այդ նիստին գրանցվի, օրինակ՝ մեկ պատգամավոր: Այս պարագայում Ազգային ժողովի նիստն իրավագոր չի համարվի, քանի որ նիստում քվորումն ապահովված չէ և ազգային ժողովի նախագահն Օրենքով նախատեսված ընդհանուր կարգի համաձայն, պարտավոր է տվյալ օրվա նիստը համարել չկայացած՝ քվորում ապահովված չլինելու հիմքով: Հակառակ տրամաբանության դեպքում (եթե դիմողների փաստարկները հիմնավոր համարվեն), կստացվի, որ այդ օրը ներկայացած պատգամավորի որոշմամբ կարող է որոշում ընդունվել:

25. Կենտրոնը գտնում է, որ Վիճարկվող նորմով նախատեսված կարգավորումը համապատասխանում է քվեարկությանը մասնակցած



պատգամավորների ձայների մեծամասնությամբ որոշում ընդունելու սկզբունքին: Հակառակ պարագայում ՀՀ Սահմանադրությունը նիստի իրավագործության և որոշման ընդունման համար քվորման նվազագույն շեմ չէր նախատեսի:

**Եզրակացությունը.**

Կենտրոնի համոզմամբ վիճարկվող նորմը որևէ խնդրահարույց կարգավորում չի պարունակում՝ արտահերթ նիստ կամ նստաշրջան գումարելու նախաձեռնությամբ հանդես գալու պատգամավորների մեկ երրորդի սահմանադրական իրավունքի իրացման առումով:

Ավելին, Վիճարկվող նորմով նախատեսված կարգավորումը լրացուցիչ երաշխիք է հանդիսանում ազգային ժողովի ցանկացած նիստում ցանկացած որոշումը պատգամավորների ձայների մեծամասնությամբ ընդունելու սահմանադրաիրավական կարգավորում ունեցող սկզբունքի իրացման առումով:

Համակարգող՝

Արա Զոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան